ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

«ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.86 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀՀ, 0061.ք.Երևան, Բագրատունյաց45, հեռ.՝. (+374 10) 483-960, էլ փոստ՝ school86@schools.am

№ 86/31 «24» օգոստոս 2023թ.

ԵՐԵՎԱՆԻ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ
ՏԻԿԻՆ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԵԼԻ՝ ՏԻԿԻՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ «Երևանի Մարտիրոս Սարյանի անվան հ.86 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում 2022-2023 ուստարում առաջացել է ուսուցչի թափուր տեղ՝ 2-րդ դասարանի դասվար (16 ժամ), «ՆԶՊ» (4 ժամ), «Աշխարհագրություն» (8ժամ), «Պատմություն» (15 ժամ) առարկաներից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 14 -ին՝ ժամը 14:00-ին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ Դ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի Մարտիրոս Սարյանի անվան հ.86 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում դասվար «Մայրենի» (8ժամ), «Մաթեմատիկա» (7ժամ), «ՆԶՊ» (4 ժամ), «Աշխարհագրություն» (8ժամ), «Պատմություն» (15 ժամ) առարկաներից ուսուցչի թափուր տեղի համար մրցույթ:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափսի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 7 –ը ներառյալ ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 14-ին՝ ժամը 14:00-ին, «Երևանի Մարտիրոս Սարյանի անվան հ.86 հիմնական դպրոցում» Բագրատունյաց 45 հասցեում:

Տեղեկությունների համար զանգահարել (010)483960, (010)483980 հեռախոսահամարներով: